ՀՀ Լոռու մարզպետ Արամ Ղազարյանին

Հայաստանի Հանրային Ռադիոյի

Լոռու մարզի թղթակից Լուսինե Սարգսյանից

/լրագրող, ք.Վանաձոր /

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Ղազարյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասի» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալի վերաբերյալ:

1.Քանի՞ հյուրանոցային/ հյուրատնային տնտեսություն է գործում Դեբեդի վարարման հետևանքով տուժած Ալավերդու տարածաշրջանում,

2. 2023-ին որքա՞ն զբոսաշրջիկ է այցելել Ալավերդու տարածաշրջան,

3. Կա՞ն արդյոք տվյալներ, թե Դեբեդի վարարման հետևանքով քանի հյուրատնային տնտեսություն է տուժել/ վնասվել,

4. Մարզի զբոսաշրջային ուղղությունների մեջ ի՞նչ տեսակարար կշիռ է զբաղեցնում Ալավերդու տարածաշրջանը, եթե կան ամսական կտրվածքով տուրիստական հոսքերի թվական տվյալներ, խնդրում եմ ներկայացնել:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ՝

Լուսինե Սարգսյան

03.06.2024 թվական